

կիւսը՝ կղեմէս Ը. Պապին (1592—1605) հպոտակութիւն յայտնեց և Պապը, իբր թէ ասով ամէն ինչ վերջացած ըլլար, փութաց եթովպիա զրկել եպիսկոպոսներ, — որոնցմէ մին՝ Ալֆրեստո Մէնտէզ Յիսուսեանը «Պատրիարք եթովպիոյ» տիտղոսով — (Ագոնց, էջ 564) ընկերակցութեամբ շատ մը վարդապետներու և Ասոնք յաջողեցան բազմաթիւ Հապէշներ կաթողիկոսիական դարձնել, օգտուելով կղտիոս կամ Գլարտիոս կայսեր բարի տրամադրութիւններէն հանդէպ Հռոմի:

Այսպէս՝ կաթողիկ բրոքականոր մեծ մղում մը ստացաւ ժէ. դարուն սկիզբը, գրգռելով կրկին բնիկ կղերին զայրոյթը, որ քաղաքային պատերազմի թատերավայր դարձուց երկիրը, ուր կաթողիկոսութեան յարող և ազգային եկեղեցիին հաւատարիմ Հապէշները իրարու դէմ կը կռուէին:

Մասնաւորապէս երբ Սիտոնիոս թագաւորը (1607—1632) պաշտօնապէս ընդունեց կաթողիկոսութիւնը 1625ին, և լատին կրօնաւորներ, իրենց անակընկալ յաջողութենէն գինովցած, փորձեցին լատին ծէսը ներմուծել հոն, գրգռութիւնը մեծցաւ: Կղերը ապստամբեցուց ժողովուրդը թագաւորին դէմ: Թագաւորը փորձեց բռնութեամբ իր կամքը պարտադրել և հապէշ եկեղեցին Հռոմի ենթարկել: Փորթուգալցիք զայն պաշտպանել աշխատեցան, սակայն անկարելի եղաւ: Թագաւորը տեղի տուաւ և գահէն հրաժարեցաւ:

Հապէշ եկեղեցին նախնեաց հաւատքին և ծեսերուն վերադարձ մը ըրաւ 1632ին (Ագոնց):

Կայսեր եղբայրը՝ Մինաս հալածեց Յիսուսեանները այն պատրուակով, որ խոստացած էին փորթուգալեան բանակներ բերել եթովպիոյ օգնութեան,